Ավետիս

Բարով, բարով էս տաճարով, ավետիս, ավետիս,
Սուն ու գերան հազարաշեն, ավետիս, ավետիս։

Աս տուն շինած գարնան ծաղկով, ավետիս, ավետիս,
Աս տան քարեր սուրփ մարկըրիտ, ավետիս, ավետիս։

Կըտեր հողը խնկան փոշի, ավետիս, ավետիս,
Հողի վրեն ծալ - ծալ ոսկի, ավետիս, ավետիս։

Թոնիրները եկեղեցի, ավետիս, ավետիս,
Լավաշները գործած խաչեր, ավետիս, ավետիս։

Հացթուխները խանում-խաթուն, ավետիս, ավետիս,
Հարսներ բոլոր քանց եղվընիկ, ավետիս, ավետիս։

Տուն ավլողը ջուխտ աղունակ, ավետիս, ավետիս
Ձեռ ավելը փունջ մանուշակ, ավետիս, ավետիս։